# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
# ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

(աստվածաբանական համալսարան)
հայտարարում է 2011 - 2012 թթ. ուսումնական տարվա

## Ը Ն Դ ՈՒ Ն Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գևորգյան հոգևոր ճեմարան (աստվածաբանական համալսարան) կարող են ընդունվել ՀՀ և այլ երկրների մինչև 21 տարեկան քաղաքացիներ, որոնք ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն և զավակն են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և որոնք հաջողությամբ կհանձնեն ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից. Հայոց լեզու (գրավոր, հարցարան)

1 Հայ գրականություն (բանավոր)

2 Հայոց պատմություն (բանավոր)

3 Երաժշտություն (երգեցողություն, լսողական ընդունակություն, ռիթմի զգացողություն)

1 Օտար լեզու (անգլերեն՝ ստուգարք)

Նախքան քննությունները դիմորդները ճեմարանի տեսչության հետ ճանաչողական բնույթի զրույց կունենան հետևյալ նյութերի շուրջ.

1 Սուրբ Գրքի իմացություն,

2 Հայ Եկեղեցու պատմության մասին գիտելիքներ,

3 Եկեղեցական փորձառություն,

4 Ինքնաարտահայտվելու կարողություն:

Դիմումները և ներքոհիշյալ փաստաթղթերը տրվում են Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչի անունով.

1 Դիմում

2 Միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության վկայական

3 Բնութագիր (դպրոցի տնօրենից)

4 Զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը)

5 Բժշկական վավերացման տեղեկանք (086 ձև)

6 Երկու լուսանկար (3 X 4 չափի)

7 Անձնագրի պատճեն

8 Ինքնակենսագրություն

9 Երաշխավորագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգևոր հովվից

10 Տեղեկանք բնակավայրից

11 Մկրտության վկայական

Փաստաթղթերը անձամբ ներկայացնել Գևորգյան հոգևոր ճեմարանիքարտուղարություն:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակիից, հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 23-ը, ժամը 10:00-16:00 (շաբաթ օրը մինչև ժամը 13:00):

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան:

Հեռախոս (010) 517-185, (010) 517-180:

ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ